Opening Extractives

Unlocking the benefits of ownership data

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՞Վ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆ

1

Կազմակերպության իրական շահառուն այն անհատն է, ում սեփականության իրավունքով պատկանում են ընկերության բաժնետոմսեր (բաժնեմաս) կամ այն անհատը, ով այլ միջոցներով վերահսկում է կազմակերպությունը:

ԻՇ-ն իրական մարդիկ են, ովքեր կանգնած են ընկերության սեփականության շղթայի վերջում:

Նրանք.

- վերահսկողություն են իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ, և/կամ
- ունեն դրա վերջնական սեփականության մասնաբաժինը, և/կամ
- դրանից շահույթ են ստանում:

Այլ ընկերությունները կարող են լինել ընկերության անմիջական, իրավական սեփականատերը, բայց միայն մարդիկ կարող են լինել ԻՇ:

Պետությունները հաճախ օգտագործում են ԻՇ բացահայտման շեմեր:

Հայաստանում ԻՇ բացահայտման շեմը հետևյալն է.

10% հանքարդյունաբերության ոլորտում

20% բիզնեսի մյուս բոլոր ոլորտներում



2.1 ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ



Իրական շահառուների հայտարարագրերը լրագրողների համար չափազանց կարևոր և արժեքավոր աղբյուր են՝ բացահայտումներ և հետաքննություններ իրականացնելու համար:

Հաճախ հանրային դեմքերը, պետական պաշտոնյաները և նրանց հետ փոխկապակցված անձինք, ինչպես նաև իրավախախտները ստեղծում են բարդ սխեմաներ՝ այս կամ այն կազմակերպությունում և ընկերությունում իրենց ներգրավվածությունն ու ազդեցությունը քողարկելու համար: Այդպիսով չափազանց բարդ է լինում հասկանալ, թե ով է իրականում կանգնած ընկերության հետևում: Այս մեխանիզմը հաճախ օգտագործվում է կոռուպցիայի, պետական միջոցների յուրացման, փողերի լվացման, կազմակերպված հանցավորության, հարկերից խուսափելու և ֆինանսական այլ հանցագործությունների համար:

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ ԼՐԱԳՐՈՂԻՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ

- ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԽՈՐՔԱՅԻՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՏԵՎՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ԱՆՁԱՆՑ
- ՊԱՐԶԵԼ՝ ԱՐԴՅՈՔ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՆ ԿԱՄ ՈՐԵԷ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
- ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ԱԿՆՀԱՅՏ ԿԱՊԵՐԸ, ՆՈՒՅՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԿԱՄ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- ՀԱՄԱՏԵՂԵԼ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ՝ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՕՐԻՆԱԿ՝ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ, ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՅԼՆ)

Լրագրողները նաև կենսական դեր ունեն ԻՇ հայտարարագրերում առկա թերությունները կամ կեղծ տվյալները բացահայտելու և այդ մասին հանրությանը տեղեկացնելու հարցում:

3.1 Ի՞ՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐՏԵՂ ԵՆ ԴՐԱՆՔ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ

Կազմակերպությունների իրական շահառուների հայտարարագրերում լրագրողները կարող են գտնել՝

- կազմակերպության մասին տվյալները,
- բաժնետոմսերի ցուցակման տվյալները,
- պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության մասին տվյալները,
- միջանկյալ իրավաբանական անձանց մասին տվյալները,
- ընկերության իրական շահառուների տվյալները:

Հայաստանում իրական շահառուի բացահայտման շեմը

10% հանքարդյունաբերության ոլորտ

20% բիզնեսի այլ ոլորտներ

ԻՇ հայտարարագրում ներառված իրական շահառուի տվյալները

- Անուն/ազգանուն
- Քաղաքացիություն
- Անձի ինքնությունը հավաստող տվյալները
- Անձը հաստատող փաստաթուղթը
- Անձի հաշվառման և բնակության հասցեները
- Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (համապատասխան փաստաթղթեր)
- Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները (երբվանից է հանդիսանում ԻՇ)
- Իրական շահառուի կոնտակտային տվյալները

Միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները

- Միջանկյալ իրավաբանական կազմակերպության տվյալները
- Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները
- Մասնակցության շղթան

Այս տվյալները հրապարակվում են ԻՇ հանրային ռեգիստրում և ամբողջ ծավալով հասանելի են լրագրողներին e-register.am կայքում:

4.1 ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴՐԱՆՔ

Կազմակերպությունների իրական շահառուների վերաբերյալ տվյալները հասանելի են **e-register.am** կայքում:

Կայքի **«Որոնում» բաժնում** հնարավոր է իրականացել որոնում ինչպես ըստ կազմակերպության, այնպես էլ՝ ըստ իրական շահառու ֆիզիկական անձի:

ՔԱՅԼ 1 **Այցելեք *e-register.am* կայքը:**

ՔԱՅԼ 2 **«Որոնում» պատուհանում գրեք կազմակերպության անվանումը:**

ՔԱՅԼ 3 **Գտեք կազմակերպության անվանումը և սեղմեք վրան:**

ՔԱՅԼ 4 **Կնկատեք ԻՇ հայտարարագիր ենթաբաժինը, սեղմե՛ք «Տեսնել» կոճակը էկրանի ձախ անկյունում:**

ՔԱՅԼ 5 **Ուշադրություն դարձրեք ամսաթվին, որպեսզի բացեք թարմացված հայտարարագիրը:**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է՝

- դիտել որպես հայտարարագիր առցանց եղանակով,
- դիտել գծապատկերով, որտեղ երևում է կազմակերպության սեփականության շղթան,
- տպել կամ պահպանել pdf ֆորմատով,
- ներբեռնել json ֆորմատով:

Json (JavaScript Object Notation) ֆորմատը թույլ է տալիս տեքստային տվյալները ցուցադրել համակարգված տեսքով: Տվյալները ներբեռնելուց հետո դրանք կարելի է վերլուծել համակարգչային այլ գործիքների օգտագործմամբ:

ԱՌԱՎԵԼ ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՆ ՊԱՏԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՄԱՏԵՂԵԼ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝

- ***ԿԸՀ ընտրողների ռեգիստր***,
- ***Հայաստանի ֆոնդային բորսա***,
- ***Aleph, Հետազոտական նյութերի համաշխարհային արխիվ***, որը պահվում է «Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի» կողմից (OCCRP),
- ***Հայաստանի արդյունահանող ընկերությունների ցանկ*** (EITI զեկույց)
- ***Open ownership-ի ռեգիստրի շրջանակ***, որտեղ հնարավոր է փնտրել եւ գտնել ավելի քան 16 միլիոն ընկերությունների ԻՇ տվյալներ,
- ***org-id.guide***, գրանցված ընկերությունների համաշխարհային բազա,
- ***Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքէջը***, որտեղ կարելի է գտնել քաղաքական բացահայտված անձանց ֆինանսական բացահայտումներ և ունեցվածքի հայտարարագրեր՝ շահերի հնարավոր բախում գտնելու համար,
- Հայաստանում գործող գնումների բոլոր համակարգերը՝ պետական պայմանագրեր ստացած ընկերությունները գտնելու համար ***(https://gnumner.am, https://armeps.am/ppcm/public/contracts)***,
- ***Դատալեքսը***, որտեղ կարելի է տեղեկություն ստանալ պատժամիջոցների ենթարկված ընկերությունների մասին:

5 ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ՈՒՆԵՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ

Իրական շահառուների թափանցիկությունը ներդրվել է որպես փողերի լվացման և հարկերից խուսափելու դեմ պայքարի կարևոր գործիք: Ստվերային ընկերությունները հիմնականում օգտագործվում են շահույթը թաքցնելու, ահաբեկչություններ ֆինանսավորելու կամ անօրինական ճանապարհով ձեռք բերված գումարները թաքցնելու նպատակով: 1980-2020թթ. ընթացքում կոռուպցիոն ամենամեծ դեպքերի մոտ 70 տոկոսում ներգրավված են եղել անանուն ընկերությունները:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԻՇ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Գաղտնի իրական շահառուն խնդիրներ է առաջացնում պատասխանատու ընկերությունների համար, քանի որ այն թաքցնում է բիզնես գործընկերների կամ այն ընկերությունների շահառուների ինքնությունը, որոնց հետ նրանք աշխատում են:
- Ընկերության իրական շահառուի վերաբերյալ թափանցիկությունը կարող է նվազեցնել ֆինանսական և վարկանիշի հետ կապված ռիսկերը:
- Իրական շահառու սեփականության մասին տեղեկատվության հրապարակումը խթանում է պատասխանատու ներդրումներին, ավելի կանխատեսելի ներդրումային միջավայրին և բոլոր ընկերությունների համար հավասար պայմանների ապահովմանը:

Հայաստանում օրենսդրությամբ պարտադիր է շահառուի/ների բացահայտումը, ովքեր իրապես վերահսկում կամ շահույթ են ստանում բիզնեսից: Իրական շահառուի հայտարարագիր ներկայացնելը ընկերությունների պարտավորությունն է:

Հայաստանում գրանցված բոլոր իրավաբանական անձինք մինչ 2023թ. մարտի 1-ն արդեն ներկայացրած կլինեն ԻՇ հայտարարագիր: Հայտարարագրերը հրապարակվում են հանրային ռեեստրում, որը հասանելի է e-register.am կայքում:

Տեղեկատվական քարտերը պատրաստվել են
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝
Open Ownership կազմակերպության աջակցությամբ
«Իրական շահառուների տվյալների ստանդարտի կիրառումը Հայաստանում»
խորագրով ծրագրի շրջանակում, որն իրականացվել է
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI)
և Open Ownership-ի հետ համատեղ:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

foi@foi.am

www.foi.am

Opening Extractives
Unlocking the benefits of ownership data

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ